

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կես տարվանը 6 բուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Քիթիլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԵԿՈՂ 1889 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Քիթիլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպրիետարով Մշակը կը ստանանք սեփական ՀԵՌԱԿԻՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 բուբլ է, վեց ամսվանը 6 բուբլ է:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊՄԱԳՐԱՍԱՆՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում Քամաձեղի տանը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газети «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագրութեան տարածարարող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ

Սկզբունք և անձնակազմութիւնը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գարբիէլ Սունդուկեանցի ջրան և հինգ ամսակը. Նամակ Արապելայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փարիզեան կոմիտէի մասին. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԿԻՆԵՐ.—ԲՈՐՄԱ.—ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բժշկի վերջները:

ՍԿԶՐՈՒՆ ԵՒ ԱՆՁՆԱԿՈՒԹԻՒՆ

Մամուլի արժանաւորութիւնը մշտական սկզբունքի անխախտ պահպանելու մէջն է: Սկզբունքին պէտք է զօժան անձնական հայեացքները, անձնական համակրութիւնները:
Մամուլը անկարող է հասարակաց կարծիքի ղեկավարող լինել, եթէ նա կը զօժան սկզբունքները անձնակազմութիւններին, եթէ իր դաւանած պրինցիպները այս կամ այն դէպքում կը զօժան, նայելով թէ ինքն լըմբազդելը կամ խմբագրութիւնը լաւ կամ վատ յարաբերութիւններ մէջն են գտնվում այս կամ այն անձնակազմութեան հետ: Մամուլը չէ կարող հասարակաց կարծիքի անկողմնապահ ղեկավարող լինել, եթէ անզոր կը փոխ իր հայեացքները սկզբունքներէ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՏՆԵՐԸ

Չողովրդացած բժշկական գրքերի կարևորութիւնը.—Նրանց գրելու ձևերը.—Հիւանդութիւն որոշելու դժուարութիւնները.—Հասարակութեան սէրը դէպի դեղերը.—Առողջապահութիւնը մեր դպրոցներում.—Տիրացու բնագէտը.—Գարանոցակիր ռուսացիները և քանադակները նշանակութիւնը առողջապահութիւն տարածելու համար.—Ինքնակոչ հէքիմներ, կախարհներ և խաբեքներ.—Կրթելը անհետում են, խուլներ լսում են, համբեր խոսում են.—Առողջապահութեան անսահմանութիւնը.—«Չրոյցներ» ծրագիրը:—Իմ խնդիրը:

I

«Մշակ» մէջ, քանի մի անգամ, թէ առաջնորդող յօդուածներով և թէ նամակներով հարց է յարուցվել, հրաւիրելով հայ բժիշկներին նըպատել հանրամատչելի գրուածներով, բժշկական գիտութեան սկզբունքները ժողովրդի մէջ տարածելուն. մինչև անգամ առաջարկութիւններ էին լինում, ժողովրդին մատչելի լեզուով բժշկաբաններ պատրաստել, որոնց օգնութեամբ դեղերում և ընդհանրապէս բժշկից զօրել տեղերում, ամեն մի փոքր ի շատ է գրագէտ անձը կարողանար հիւանդներ բժշկել և կամ որ և իցէ օգնութիւն անել նրանց: Այս տեսակ առաջարկութիւններ շատ անգամ կարողացած եմ մեր պար-

բունքի վրա, նայելով թէ ո՞վ է այս կամ այն սկզբունքի գործադրողը՝ բարեկամը թէ թշնամին, կուսակիցը թէ հակուսակիրը: Ընդհակառակն, միմյանց այն ժամանակ մամուլի խօսքը զին ունի, երբ հրատարակուողը, մտանալով իր անձնական յարաբերութիւնը դէպի այս կամ այն անձը՝ գովում է նրա արածը, եթէ այդ արածը գովելի է իր մշտապէս դաւանած անխախտ սկզբունքի տեսակէտից, իսկ պախարակում է ուրիշ դէպքում նոյն անձի արածը, երբ նրա արածը պախարակելի է նոյն անփոփոխ և անխախտ սկզբունքի տեսակէտից:

Ինքն իրան յարգող մամուլը չը պէտք է շարժելի պէս ամեն օր փոփոխել իր դաւանած սկզբունքները, բայց նա կարող է, նա իրաւունք ունի, նա մինչև անգամ պարտաւոր է փոփոխել իր հայեացքները անձինքների վրա, նայելով թէ անձինք հաւատարիմ են մնում հիմնական սկզբունքին, թէ դաւաճանում են նոյն սկզբունքին:

«Մշակ» ուղղութեան կատարի հակառակորդները միշտ մեղադրել են մեզ, թէ մենք մեր լրագրի գոյութեան կամ գործունեութեան ընթացքում շատ անգամ փոփոխապէս գովել և պախարակել ենք նոյն անձնակազմութիւններին:

Բայց «Մշակ» այդ տեսակ վարմունքը

բերական մամուլի մէջ, բայց թէ դրանք որքան օգուտ կարող են տալ, եթէ չստանք վնաս, որքան ինձ յայտնի է, դու պարբերական մամուլի մէջ պարզված չեն:

Բժշկականութիւնը երկու կերպ կարելի է ժողովրդացնել: Կամ կարելի է ընթացողին ծանօթացնել մարդու կազմուածքի կանոնաւոր (ֆիզիօլոգիական) և անկանոն (հիւանդաբանական) երևոյթների հետ, բացատրելով հիւանդութեան էությունը և դրանից առաջացած առողջապահական միջոցները, որոնք հիւանդութեան առաջն են առնում կամ նախազգուշացնում, և կամ կարելի է ընթացողին ծանօթացնել այլ և այլ հիւանդութիւնների նշաններով—արկածների հետ, առաջարկելով և այն դեղերը, որոնցով այդ հիւանդութիւնները բժշկվում են:

Իմանալ կամ որոշել մի որ և իցէ տկարութիւն այնքան հեշտ բան չէ, ինչպէս շատերն են կարծում: Եթէ բժիշկները երկար տարիներ, բժշկականութեամբ պարապելով, ոչ թէ միայն գրքերի միջոցով, այլ և հիւանդի անկողնի մօտ, կարողանում են սխալվել, մի բժշկի յայտնած անբուժելի տկարութիւնը բուժելի համարել, կամ տկարութեան որպիսութիւնը այլ կերպ բացատրել, ուրեմն որքան դժուար է ոչ-բժիշկ մարդուն, լինի նա գիւղացի, ուսուցիչ, թէ համալսարանակիր, ժողովրդացած բժշկական զբոյններով հիւանդութիւն ճանաչել, հիւանդներին բժշկել անձանօթ լինելով հիւանդութիւնների որոշման այժման բարդ եղանակների հետ, ընտ-

նրա հաստատամտութեան համար ամենամեծ զրաւական կարող է համարվել, որովհետև մենք միշտ զօժան ենք անձնակազմութիւնները մեր դաւանած անխախտ սկզբունքին: Սկզբունքը մեզ համար գլխաւորն էր միշտ, իսկ անձնակազմութիւնները երկրորդական բան. անձնակազմութիւնների վրա մենք միշտ նայել ենք որպէս նոյն սկզբունքի կատարողներ լրա: Եթէ անձնակազմութիւնը հաւատարիմ էր մնում մեր սկզբունքին, մենք զովաբանել ենք նրան. իսկ եթէ նոյն անձնակազմութիւնը սկսում էր իր նախկին պաշտած սկզբունքի դէմ գործել, մենք անմիջապէս սկսում էինք անխնայ յարձակվել այդ անձնակազմութեան վրա, անխնայաբար հալածել նրան:

Մենք այսօր աւելորդ ենք համարում բերել այն բաղձաթիւ օրինակները, երբ մենք նոյն անձնակազմութեան մի անգամ «դաւաճան», «մասնիչ» էինք անուանում, իսկ միւս անգամ գովում էինք նրա գործունեութիւնը, համակրութիւն էինք յայտնում նրան: Այդ այն պատճառով է, որ մենք միշտ հաւատարիմ մնալով մի և նոյն սկզբունքին, այդ նոյն անխախտ սկզբունքի տեսակէտից էինք նայում մարդկանց արածների վրա: Մեր դաւանած սկզբունքի համեմատ գործողին մենք միշտ պաշտպանել ենք և կը պաշտպանենք, իսկ նոյն սկզբունքի դէմ գործողին միշտ հալածել ենք և կը հալածենք: Այդ է պատճառը որ մենք նոյն անձնակազմութիւններին մերթ գովել, մերթ պախարակել ենք... Մեզ համար գլխաւորն է սկզբունքը, մշտական «profession de foi»՝ համոզմունքի դաւանանքը, — իսկ անձնակազմութիւնը մենք միշտ զօժան ենք նոյն անխախտ սկզբունքին, հէնց որ տեսնում էինք թէ նա դաւաճանում է այդ սկզբունքին:

Մենք երբեք անպայման չենք պաշտպանել մի մարդուն, միայն այն պատճառով որ այս կամ այն անձնական, բարեկամական, կամ նիւթական կապեր ունենք նրա հետ, չը նայելով որ նոյն մարդը դաւաճանում էր մեր դաւանած սկզբունքին:

Բայց, ի հարկէ, սկզբունք պաշտպանելու համար, նախ և առաջ պէտք է սկզբունք ունենալ:

Իսկ եթէ մամուլը չունի մշտական, անխախտ, անփոփոխ սկզբունքներ, — ի հարկէ նա իր այդ փոփոխական սկզբունքները անզոր գոհում է անձնական հայեացքներին, անձնական բարեկամական կապերին... Այդպէս է վարվում համոզմունքից ու սկզբունքներից զուրկ մամուլը: Նա պաշտպանում է, զիջուք, ընտրողական սկզբունքը, ընտրվածի պատասխանատուութեան սկզբունքը ժողովրդի առջև, — բայց հէնց որ ժողովրդի առջև պատասխանատու լինելու սկզբունքը յանդիմաբար ոտնակոխ է անում խմբագրի անձնական բարեկամը, նոյն խմբագիրը յանկարծ սկսում է պախարակել իր նախկին պաշտպանած սկզբունքը, միայն թէ պաշտպանել բարեկամին...:

Այդ տեսակ մամուլը արժանի չէ հասարակաց կարծիքը անկողմնապահութեամբ, անկողմնութեամբ, անձնուիրաբար ղեկավարող մամուլ կոչվելու, այլ այդ տեսակ մամուլը մի անձնական ստոր աջ էր և, աւելի ոչինչ...:

Աւելի լաւ է անխնայաբար զօժան անձնակազմութիւններին, քան թէ մազի չափ զօժան սկզբունքը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՔՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ՔՍԱՆԶԻՆԳԱՄԵԱԿԸ

Մեր լրագրի ներքայ համարում տպում ենք թատերադրող Գարբիէլ Սունդուկեանի մի նամակը, որով նա դիմել է հայոց Երասմատական ընկերութեան վարչութեանը, յայտնելով, որ ինքը հրատարակում է իր յօդուածները տոնախմբութեան պատուից և նրա մէջ մասնակցելուց:

Այդ նամակը առիթ է տալիս մեզ մի ջանք խօսք ասելու:

Պ. Սունդուկեանի համեստութեան, թէ մի ուրիշ նոյնքան յարգելի դրացմունքից դրված խոյս է տալիս իր դործունեութեան առիթով տեղի ունեցող ցուցիկից, բայց մենք կարծում ենք, որ հասարակութիւնը բոլորովին կապ չունի դաւանաբար այդ տեսակ պագմունքների հետ, և նոյն հասարակութիւնը իրաւունք ունի և կատարելապէս պար-

ոչ թէ ստանալիք կերպով սպասել հիւանդութեան առաջանալուն և ապա բժշկել նրան: Խրաքանչիւր մարդու համար ինչ կարող է աւելի թանկագին լինել, քան թէ առողջութիւնը, բայց շատ քիչ են հետաքրքրվում բժշկական սկզբունքներով, փոքրամասնութիւնն է միայն աշխատում ծանօթանալ առողջապահական գիտութեան հետ: Համալսարանակիր ընագէտներն էլ ձեռք ձեռքի տուած տղէտ ամբողջի հետ միասին նպատակ են այդ ձգտումներն էլ դադարեցնելու: Մեր դպրանոցներում, և թէ տղաներն ու աղջիկներն զբոսնում մի ժամանակ աւանդվում էին փոքր ի շատ է առողջապահութեան և բնախօսութեան սկզբունքները: Շատերին յայտնի պիտի լինի թէ որպիսի առաջնակարգ դեր էին խաղում այդ առարկաները Քիթիլիսի Գայեանեան և Մարիամեան դպրոցներում, Երեսնի Գայեանեան օրիորդաց ուսումնարանում: Ելմիստի ճեմարանում առողջապահութիւնը և բնախօսութիւնը ընդարձակ ծրագրով էր դասախօսվում: Գարոցասէր Գէորգ Կաթողիկոսը մի առանձին ուղարկութիւն էր դարձնում թէ այդ առարկաների վրա և թէ ընդհանրապէս բնախօսութեան վրա: Այժմ բնախօսութեան դասերը թիւր պակասեցրած է, և եղած առողջապահութեան էլ բոլորովին դուրս է շարված դպրանոցական և դպրոցական առարկաների թւից: Մի ժամանակ ընագէտ, այժմ տիրացու չլրջի ու սխեռ ուստող՝ մանկավարժը մշակելով մեր դպրոցական առարկաների ծրագիրը՝ աշխատել է իբր աւելի

հայրենիքը, որին մենք ամենքս ցանկանում ենք տեսնել բաղադրով, խաղաղ և բարձր:

«Օրից օր առկա և առկա է պարզվում, որ աներևակայելի է Ֆրանսիան երջանիկ տեսնել հանրապետական կառավարության ձեռքի տակ, որը այդ երկիրը, ինչպես մի անպաշտպան դոճին, տալիս է զանազան բաղադրանքներին՝ հարստաճարեղու համար Մեր ազգային երկրագործության այդ խղճով վիճակը, անկասկած, պայմանավորվում է բազմաթիվ և բազմատեսակ պատճառներով: Այդ խղճով վիճակը բառական բարձրում և ծանրանում է այն մարդկանց անհեռատեսություն և անհոգություն չնորհով, որոնք ի դժբաղդություն Ֆրանսիայի, իրանց ձեռքն են առել երկրի ղեկավարությունը գործը:

«Մեր հայրենիքը ոտի կը կանգնի միայն այն օրը, երբ միապետությունը նրան կը չնորհի անհրաժեշտ ամբողջուն և հաւատ ղեկի իր սեփական ուժերը, երբ նա կը բարձրացնի Ֆրանսիայի ֆինանսական դրությունը, և յաջողաբար կը լինելանցնի այն մի քանի հարկերը՝ որոնք ճնշում են երկրի վրա: Ազգային վերաբերման յոյսը Ֆրանսիայում միայն այն օրը յարույթին կառնի, երբ հայրենիքը վիճակը կը յանձնվի ազնիւ մարդկանց: Ձեր ծննդավայրը վերադառնալով անդադար պահանջեցէք, որ Ֆրանսիայի կառավարությունը յանձնվի ազնիւ մարդկանց: Եւ թող այդ պահանջը դառնայ ընդհանուր նշանաբան բոլոր անկեղծ քաղաքացիների համար:»

Թէ ուղբեր են այդ ազնիւ մարդիկը, այդ ի հարկէ շատ լաւ յայտնի է ինչպէս Փարիզեան կուսին, այնպէս և զիւրացի պատգամաւորներին: Բայց միթէ Փարիզեան կուսը չը գիտէ, որ նոյն այդ զիւրացիների պատգամաւորութեանը շատ լաւ յայտնի է Ֆրանսիական միապետութեան պատմութիւնը, որի թողած հետքերը զեռ շատ թարմ են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինում բազմատեսակ լուրեր են պտտում վիլհելմ կայսրի առողջութեան մասին. կասկածում են որ կայսրի առողջութիւնը լաւ չէ: Բայց չը նայած այդ կասկածանքներին մի քանի լրագրիչներ գրականապէս հանդուստացուցիչ լուրեր հաղորդեցին վիլհելմ կայսրի առողջութեան մասին:

—Վիենայից հեռագրում են, որ վիլհելմ կայսրը չնորհաւորելով Ֆրանս-Յոսթի կայսրին, նրա 40-ամեակի առթիւ մեծ յոյս է յայտնել աւստրո-գերմանական դաշնակցութեան ամուր լինելու մասին:

—Գերմանական մի քանի լրագրիչներ վերջին ժամանակներս սկսել են թշնամաբար կերպով լստել աւստրիական պրինց Բուրբուրի մասին. այդ բանը առանձին դժգոհութիւն է յարուցել Աւստրիայում, որովհետև Բուրբուրը իր ուղղութեամբ և իր յատկութիւններով ընդհանրապէս սիրելի է ժողովրդին և բաւական ժողովրդակա՛նութիւն ունի:

—Բելգիայում, ինչպէս հեռագրում են Բրիտանից, վերջին ժամանակներս հանրապետական կուսակցութիւնը սկսել է շատ զարգանալ և արդէն բաւական աչքի ընկնող ոյժ է կազմում:

—Բելգիայից հեռագրում են, որ սանձանագրութիւնը վերաքննող յանձնաժողովը զանազան կուսակցութիւններին պատկանող անդամների մէջ համաձայնութիւն կայացաւ սանձանագրութեան նոր նախագծի վերաբերմամբ, և այդ պատճառով, կարծում են, որ մտքերը շուտով բոլորովին կը հանդարտվեն ամբողջ Սերբիայում:

—Շատրվում կայացած բանտրական ժողովում, ինչպէս հեռագրում են Բրիտանից, վճարվել է ընդհանուր գործադուլ կազմել Բելգիայի բոլոր բանտրների մասնակցութեամբ:

ՄՇԱԿԻ ՀՆՈՍԳԻՐՆԵՐ

ՀԻՄՍՍՍՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

ՊԵՏԵՐՈՒԲՈՒԳ, 28 նոյեմբերի: Լուրերին նայե-

լով, ծովային մինիստրութեան կառավարիչ է նշանակված Չիխաչով, իսկ նրա տեղը՝ փոխ-ծովայեա Կոպիտով:

ՍԵՆ-ԳԻԼ, 28 նոյեմբերի: Երեկվայ ժողովում բուլանժեան երկու պատգամաւորներ ընդունվեցան շվեյցով և աղմուկներով, կռիւ տեղի ունեցաւ, որի ժամանակ մի քանի հոգի վիրաւորվեցան:

ՆԵՍՊՈԼ, 28 նոյեմբերի: Երեկ ձերբակալվեցան երկու երիտասարդներ, երբ նրանք վառում էին այն ուռւմները, որոնք դրված էին գերմանական հիւպատոսարանի տակ:

ՍՕՅԻԱ, 28 նոյեմբերի: Վճռաձինջ ատենադ վճռեց աղաւթի ընդունումը, երբ նա կը ներկայացնի 10.000 Քրանկ գրաւակաւն:

ՊԵՏԵՐՈՒԲՈՒԳ, 29 նոյեմբերի, Չիխաչովի ծովային մինիստրութեան կառավարիչ նշանակվելը հոտատվում է պաշտօնապէս: Իսկ ծովային շտաբի գլխաւորը նշանակված է փոխ-ծովայեա Կրէմլը:

ՊԵՏԵՐՈՒԲՈՒԳ, 29 նոյեմբերի: Ռուսաց նոր փոխառութիւնը միայն Ֆրանսիայում հինգ անգամ առկա է ստանում:

Ս. ՊԵՏԵՐՈՒԲՈՒԳԻ ԲՅՈՒՍՍ

Նոյեմբերի 29-ին

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 10 Քուսա արծէ, 100 մարկ, 100 Քրանկ, etc.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 40% փոխառութիւն, 50% փոխառութիւն, 50% առաջին փոխառութիւն, etc.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 50% գրաւական թղթեր կալուած, 50% գրաւական թղթեր կալուած, etc.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 50% գրաւական թղթեր կալուած, 50% գրաւական թղթեր կալուած, etc.

ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ԿՈՂՄԻՑ

ՊԵՏԵՐՈՒԲՈՒԳ, Պ. Չ. Մենք կատարելապէս համաձայն ենք ձեր ընդհանրապետութեան մէջ յայտնած մտքերի հետ, բայց ամբողջ ուղի ստանալու պատճառով չենք կարող ապագրել, քանի որ նոյն նիւթի մասին «Մշակի» մէջ արդէն լոյս էին տեսել մի քանի նկատողութիւններ:

ԿԻՎԻ, Գ. Ե. Սպասում ենք ձեր վկայ շարունակութեան:

ԲԱԳՈՒՄ Ա. Տէր-Գաս. Ուղարկեցինք ձեր պահանջած բրոշուրը «ЭКОНОМ. Пол. Турецк. Армян» հեղ. Գրիգոր Արծրունու:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր
ԼՈՅՍ ՏԵՍԱՐ
«ԽՄԱՆՈՒԵԼ ՄԱՆԻԻ ԹԱՂՈՒՄԸ» վերնագրով բրոշուրը: Ծախվում է 80ԳՈՒՑ ՄԱՆԻԻ ԸՆՏԱՆԻՔԻ, Թիֆլիսի գրալաճառների մօտ: Գինն է 10 կօպէկ:

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍՍՎՈՐԻ ՄԱՐՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 9/21 դեկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ զուրս կը գնայ շոգենաւ NIEMEN (ՆԻԵՄԵՆ) նաւապետ SCIPION (ՍԻՊԻՕՆ), մտնելով Կ. Պօլիս, Պօրտ-ՂաՏօր և Լաիվայ: Ազգեստները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԵՆԺԵՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՈՐԳ ԷՆՋՈՒԲԵԱՆ ԷՆՋՈՒԲԵԱՆՆԵՑ:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, դեկտեմբերի 8-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգենաւոր, նաւապետ ԳԱՐՐԻԳ (GARRIGUES) զուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրբուս, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէլլ: Տեղեկութիւններ մտան պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմբոլուի տան, Նաբրէժնայա, և Թիֆլիսում՝ Նախկին Ար-Տրուսի գալլերեում, № 103. 2-3 (Գ. Ե. Կ.)

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ
Тифлисъ, Дворцовая ул., КАРАВАНСАРАЙ ВЪВШНІЙ АРЦРУНИ.
Կ'փորցովայա փողոց ՆԱԽԿԻՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ քարավանաւայում
ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՀԵՍ
Տղամարդկանց և կանանց ձերմակեղէն:
Սպիտակեղէն օժիտի համար 100 ռուբլուց մինչև 5,000 ռուբլի գնով պատրաստ է միշտ մեր մազաղինում:
Իսկ 5,000 ռուբլուց մինչև 10,000 ռուբլու գնով սպիտակեղէն օժիտի համար պատուէր ենք ընդունում, որը և կատարում ենք շուտ և ճիշդ կերպով: ԳՕՆՆԵՐ և ԼԷՑՑՑ 2-10.

НЪ МЕЦКАЯ ГОСТИНИЦА
ВЪ ВАРШАВѢ
31. Длугая улица 31.
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻԻՐԱՆՈՑ
ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, Կուրապա փողոց, 31. Գզտնվում է քաղաքի նոյն իսկ ԱՌՆԻՏՐԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՏՕՆՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՕՆԱՏԵՂԵՐԻ կողքին: 90 սենեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կօպէկից մինչև 3 ռուբլի օրական վարձով:
ԿՕՆԴԻՏԵՐԻԱ և ԲԷՍՏՕՐԱՆ
Ճաշեր 30 կօպէկից մինչև 1 ռուբլի:
ՕՄՆԻԲՈՒՄՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար: ԿԱՌՔԵՐԻ վարձերը չափաւոր գներով: (2)

ЗУБНАЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ
КОРОБКА 30 И 30 К.
ГИГИЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ
БОЛЬШЕ ФЛАКОНЪ 80 К.
ГИГИЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ
КОРОБКА 30 К.
СМЛАДЪ ВО ВСІХЪ АПТЕКАХЪ И АПТЕК. МАГАЗ.

ԳԼԻՍԻՈՐ ՊԱՀԵՍ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան ղեղավաճառատան, և պ. պ. Շահպարտեանցի, Մակիկերի, Սենիկիօպիւու և Ազմուրովի ղեղատներում. ԲԱԳՈՒԻ մէջ, ԲԵԿԿԵՐԻ մօտ, ԳՈՒԹԱՅՍՈՒՄ՝ Կօհօշեվի մօտ, ՄՍԱՎՐՈՊՈԼԻՄ Բրօխնօցիու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԳԱՐՈՒՄ: (2.)

ԿՈՇԿԱԿԱՐԻ ԱՐՀԵՍԱՆՈՑ
ԱՂԱՍԻ ՏԵՐ-ՋԱՔԱՐԵԱՆԻ
Գլօպիմակի, տուն Ռչտերի, № 11.
Ընդունում է կանանց և տղամարդոց ամեն տեսակ կօշիկներ: Կատարելներ, ՉԱՓԱԿՈՐ ԳՆԵՐՈՎ. պատրաստվում են շուտով: Պատուէրները ընդունվում են խանութում. պատրաստելուց յետոյ կարելի է ստանալ միայն խանութում. տուն չէ ուղարկվում: 4-10